# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Կիսլովոդսկ քաղաք-կուրորտի (Ռուսաստանի Դաշնություն) և Վանաձոր (Հայաստանի Հանրապետություն) քաղաքի միջև բարեկամական հարաբերություններ հաստատելու մասին

Կիսլովոդսկ քաղաք-կուրորտի և Վանաձոր քաղաքի ղեկավարությունը, առաջնորդվելով իրենց քաղաքների բնակչության բարիդրացիական հարաբերություններն անընդհատ զարգացնելու և բազմակողմանի կապերը զարգացնելու ձգտմամբ, որոշեցին հաստատել բարեկամական կապեր Կիսլովոդսկ քաղաք-կուրորտի և Վանաձոր քաղաքի միջև:

Կիսլովոդսկ քաղաք-կուրորտի ղեկավարությունը և Վանաձորի քաղաքապետարանը անհրաժեշտ են համարում բազմակողմանի համագործակցությունը այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են տնտեսությունը, առևտուրը, գիտությունը, մշակույթը, արվեստը, սպորտը և տուրիզմը:

Հանձնայն սույն պայմանագրի՝ երկու քաղաքների միջև մշտապես կիրականացվեն բոլոր բնագավառներին վերաբերող պատվիրակությունների փոխայցելություններ:

Վանաձոր քաղաքի և Կիսլովոդսկ քաղաք-կուրորտի բարեկամության մասին սույն պայմանագիրը կազմված է երկուական օրինակից՝ հայերեն և ռուսերեն լեզուներով՝ ստորագրված Վանաձոր քաղաքում _____ մայիսի 2005թ.:

Պայմանագիրը ուժի մեջ է ստորագրման պահից:

| | |
|---|---|
| ԿԻՍԼՈՎՈԴՍԿ ՔԱՂԱՔԱԿՈՒՐՈՐՏԻ | ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ |
| ԱԴՄԻՆԻՍՏՐԱՑԻԱՅԻ ՂԵԿԱՎԱՐ | |
| _____Ս.Վ. ԴԵՄԻԴԵՆԿՈ | _____Ս.Վ. ԴԱՐԲԻՆՅԱՆ |